ԲԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

ԺԵ ՏԱՐԻ , ԹԻՒ 6 . | 1857 | ՄԱՐՏ 15 .

բարոյական

ԻՐԵՔ ԹՈՒՈՑՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

Մարդկային գործոց մէջ իրեքը աստուածայիններուն հետ մերձաւորութիւն ունին . Ճշմարիտը զուրցել , բարիք ընել , և տուած խօսքը պահել ։

Աշխատութիւնը իրեք չարիք կը հեռացընէ 'ի մարդկանց . զախտ , զձանձրութիւն և զկարօտութիւն ։

Իրեք բան կայ զոր ինչուան վերջի շունչերնիս պէտք է յարգենք . զկրօնս , զծնողս և զօրէնս ։

Իրեք բան տղուն մտքին մէջ պէտք է կանուխ տպաւորել . Աստուծոյ վախը , անձին պատիւը պահել և ընկերին վըրայ գութ ունենալ ։

Փառասիրութեան համար բարիք ընողին իրեք վնաս կը հանդիպի . բարիքը կը ծախէ , նախատինք կը գնէ , և ստակը կը կորսնցընէ ։

Ճշմարտութիւնը զուրցելու ատեննիս շատ անգամ երեք դժուարութեան մէկը՝ ը առաջ կ'ելլէ . Նուաստ աստիճան ունեցողին ճշմարտութիւն մ' որ զրուցես՝ կը կարծուի թէ իշխանութեամբդ կը զեղծանիս . հաւասարի մը թէ որ զրուցես՝ բարեկամ մը կը կորսնցընես կամ թշնամի մը կը ստանաս . իսկ եթէ երիցագունի մը ըսելու համարձակիս՝ զրուցած ճշմարտութիւնդ նախատինք կ'ըլլայ , և դու ալ յանդուգն կը կոչուիս ։

Սուրբ աւետարանն իրեք բան խստիւ կը պատուիրէ մարդուս . ողորմութիւն , արհամարհութիւն հարստութեան , և նախատանաց համբերել ։

Իրեք վճռական խօսքեր . ան բանն զոր չես ուզեր որ ուրիշը քեզի ընէ , դու ալ ուրիշին մի ըներ . բան մը զոր այսօր

կրնաս ընել՝ վաղուան մի՛ ձգեր. և պըզտիկ բաները չնչին բանի տեղ մի՛ համարիր։

Ուշուառութիւնները մարդուս իրեք օգուտ կը բերեն. կ'ուղղեն, ոյժ կու տան և ապագայն մտածելու կը յորդորեն։

Իրեք բանով ոսկեղէն կոչուած դարը աշխարհքէս հեռացաւ. անիրաւութեամբ, թշնամութեամբ և անբարեխառնութեամբ։

Պղատոն իրեք տեսակ մարդու գինի խմելը կ'արգելուր. ծոցոր կանանց, ինչուան եօթը տարեկան տղայոց, և դատաւորաց՝ յանցաւորի մը դատակնիքը տալէն իրեք օր առաջ։

Իրեք բանով ազգ ազգէ կը զանազանուի. կրօնքով, կլիմայով և բարքով։

Իրեք ՀՆԱՍԱԿԱՐ բան իրեք քիչ ՀՆԱՍԱԿԱՐԻ հետ միացած. շատ ծախք ընել ու քիչ ստակ ունենալ, շատ խօսիլ և քիչ գիտնալ, շատ պարծենալ և քիչ մտածել։

Իրեք ԲԺԻՇԿՔ բարոյական չարեաց. բան կամ միտք, ժամանակ և հեռաւորութիւն։

Իրեք բան որ քիչ կը տևեն. նորութեան սէրը, սիրահարաց բարկութիւնը և ամուսնաց իրարու վրայ գուրգուրալը։

Մարդս ուրիշէ մը վրէժ չխնդրած՝ պէտք է որ իրեք բան մտածէ. զօրաւորի դէմ՝ վրէժխնդրութիւն ընելն վտանգաւոր է, հաւասարի դէմ՝ վախնալու բան է, իսկ ստորին աստիճան ունեցողի դէմ՝ վատութիւն։

Գիտութիւնը իրեք գլխաւոր մասն ունի. ՀԱՆՉՆԱԼ ներկայ բաներն, յիշել անցեալները և նախատես ըլլալ ապագային։

Մարդուս առջի իրեք հարկաւոր սովորութիւնքը. առաքինութիւն, խոհեմութիւն, և կրթութիւն։

Իրեք կարգէ դուրս ՀԻՆ մարդկային բնութեան. սիրտը հանդարտ բռնել նախատինք ընդունած ժամանակը, մեծութեան մէջ հեզ ըլլալ, և թշնամի մը համբուրել։

Աշխարհիս ամենէն մեծ շահու գըրգիռները. հեշտասիրութիւն, փառք և շահասիրութիւն։

Ունութեան իրեք աղնիւ բարիքները. գեղեցկութիւն, աղնուականութիւն և հարստութիւն։

Իրեք բանով մարդս մեծ կ'երևայ. դժբաղդութեանց մէջ հաստատուն ըլլալով, իր կամքը Աստուծոյ կամաց հետ միաբանել, ու թշնամեաց բարերարելով։

Իրեք բան որ ամէն մարդուս շատ սիրելի են. հայրենիք, բարեկամութիւն և ազատութիւն։

Իրեք բան մարդուս հետ կը ծնանին. ապրելու սէր, մահուան վախ, և գիտնալու կարգէ դուրս փափագ։

Իրեք բանով մարդ կը լրբանայ. պերճութիւնք, ստրկով, և պաշտպանութիւնք։

Արդարութեան իրեք գլխաւոր թշնամիները. սէր, ատելութիւն և շահախնդրութիւն։

Խոհեմութեան տրուած իրեք փառաւոր անունները. աչք առաքինութիւն, աղ կերակրոց, արեգակն աշխարհի։

Արդկային խոհեմութիւնը իրեք մասն ունի ըստ Կիկերոնի. ՀԱՆՉՆԱԼ եղածը, սուտը ՀՇՄԱՐՏԷՆ զանազանել և ըստ ժամանակին կարգի դնել իր գործքերը։

Իրեք զօրաւոր բան կան որ զմարդ դէպ 'ի չարը կը մղեն. բարկութիւն, շահ և վրէժխնդրութիւն։

Իրեք դժնդակ վերջ ունեցող բաներ. հաճոյք՝ որ ցաւով կը վերջանան, շուայտութիւնք՝ հիւանդութեամբ, փառասիրութիւն և մարդկային գեղեցկութիւն՝ մէկ կոյտ մը մոխրի մէջ։

Իրեք բան կը գեղեցկացընեն զկին մարդ. գործօնէութիւն, բարեկրթութիւն և համեստութիւն։

Ազէկ քաղաքացի մը պէտք է իրեք կատարելութիւն ունենայ. սիրել զամենքը, գովել զլաւս, և կարեկից ըլլալ գէշերուն։

Իրեք ժամանակ ունի գողը. 'ի սկզբան յանգուգն է, մէջտեղն հարուստ, իսկ վերջը ամօթով լի։

Երբոյ իրեք բան կը պակսի. աչք, հաւատարմութիւն և խելք։

Երեք առաքինութեամբ մարդս միշտ իմաստնոյ անուն կ՚ունենայ. քիչ խօսելով, շատ լսելով, և տգէտին դիմաց լռելով:

Երեք ազնիւ բան ունի մարդս. կեանք, հոգի, և պատիւ:

Երեք բան պէտք է խնդրէ մարդ. ճշմարիտը, գեղեցիկը և բարին:

Ճշմարիտ հայրենասէր ըլլալու համար՝ երեք բանի ետեւէ պիտի ըլլայ մարդ. փոյթ ունենալ տղայոց կրթութեան, առաքինութեան բարգաւաճելուն, և արուեստներն ու դպրութիւնները ծաղկեցընելուն:

Երեք բան կայ որ փող մ՚ ալ չէն արժեր. աղքատի մը խորհուրդը, բեռնակրի չափ ուժ ունենալը և լիրբ կնկան գեղեցկութիւնը:

Ծնողաց համար երեք հարկաւոր խրատ. փայփայէ որդիդ, որպէսզի ցաւիս վերջը. կատակ ըրէ անոր հետ, որ ետքը զղջաս. պատժէ՝ որ զքեզ գոհ ընէ:

Պիւթագորաս կը պատուիրէ որ և իցէ քաղքէ երեք ախտ վանտել. զդատարկութիւն, զանկարգութիւն և զանմիաբանութիւն:

Պուալօ երեք խրատ կու տայ մարդուս. պարզ եղիր առանց արուեստակութեան, վսեմ առանց ամբարտաւանութեան, հաճոյական ու սիրելի առանց կեղծելու:

Մ՝եծն Կիպրիանոս երեք բան կ՚ուզէ որ մարդուս վրայ գտնուի. սրտին մէջ՝ Աստուած, բերանն՝ ճշմարտութիւն, ձեռաց մէջ՝ ողորմութիւն:

Կանանց երեք ահաւոր զէնքերն. արտասուք, լեզու, և չարութիւն:

Կանայք երեք տեսակ արտասուք ունին. ցաւի, ուրախութեան և չարութեան:

Երեք գործք ճշմարիտ բարեկամութեան. բարիքն ուզել, բարիք ընել, և միաբանութիւն:

Ծառայ մը երեք բան պէտք է ունենայ. հաց, աշխատութիւն և հաւատարմութիւն:

Մ՝արդուս գլխաւոր երեք պարտքերը. պարտք առ Աստուած, առ ընկերն և առ անձն:

Քաղաքացւոյ մը պարտքերը երեք են. յարգել զիշխանն, հնազանդել օրինաց, և օգնել թշուառաց:

Սենեկայի ըսածին նայելով երեք թունաւոր լեզու կայ. շողոքորթին, զրպարտողին և տրտնջողին:

Երեք բան կայ որ զմարդ մարդկութենէ կը հանէ. ագահութիւն, անգթութիւն և վրէժխնդրութիւն:

Տգէտ մարդը երեք աստիճան խենդութիւն ունի. ինքզինքը գիտունի տեղ դնել, գիտութիւն գործածել, և բուն գիտունը արհամարհել:

Երեք ախորժելի բան կայ. հարկաւորը, հաճոյականը և պարկեշտը:

Երեք օգուտ ունի արեգակը. լոյս, տաքութիւն և աճելութիւն:

Ամուսնութիւնն երեք բարիք ունի. հաւատարմութիւն, միաբանութիւն և սերունդ:

Բանասիրական

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Մանուշակ :

Ո՛վ գեղեցիկ գարնան դըստրիկ
Երկչոտ սիրող անտառաց,
Զոգիս դըրդէ քո հոտ քաղցրիկ,
Դու տաս տեղի յարգանաց:

Իբր ըղձածուն ոք բարերար
Ոյր ձեռն օգնէ աղքատին,
Զշնորհսդ ընծայես հաճոյարար
Ուր գովեստից գնաս մեկին:

Դու անպաճոյճ, յաչաց հեռի,
Կեաս առանձին եւ անշուք,
Եւ աչք ի խոյզ ծաղկիդ լինի,
Զնա գուշակեն մինչ ռունգունք:

՚Դ անգութ ոտիւք անցաւորաց
Ցար ի կորուստ գնաս հեշտին.
Ընդ հարուածովք այսպէս չարաց
Է զի անմեղք մեռանին:

ՏԻԻՊՈՅ